ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2020 թվականի N 239-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետը, 48-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Կլի Նիկոլայի և Գրիգորի Խաչիկի Շամոյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 664800 վկայական, տրված՝ 24.06.2002-ին) Լոռու մարզ, Սարատովկա համայնք, գյուղ Գետավան բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, գ.Գետավան, 1-ին փողոց, թիվ 30 բնակելի տուն փաստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. ապրիլի 01
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ապրիլի 2020 թվականի N 240-Ա

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ ԹԷԱՂԱՄԱՍ 4 ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 153 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գուրգեն Ալեքսանի Ջավուկցյանի (անձնագիր՝ 0667870 , տրված՝ 01.12.2010-ին) 2020 թվականի մարտի 2-ի ՄԴ6620 դիմումը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 12072019-06-0026 վկայականը, ԱՁ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N88 որոշումներով, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N816 հրամանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 4, Երևանյան փողոց, թիվ 153 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0080-0025) Գուրգեն Ալեքսանի և Գոհար Գարեգինի Ջավուկցյանների կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 993.5քմ հողամասում ինքնակամ կառուցված 152.31քմ մակերեսով խանութը՝համաձայն ԱՁ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն ԱՁ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Փոփոխել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 4, Երևանյան փողոց, թիվ 153 հասցեում Գուրգեն Ալեքսանի և Գոհար Գարեգինի Ջավուկցյաններին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան գործառնական նշանակությունը հասարակական գործառնական նշանակության խանութ և հանել համայնքի բնակարանային ֆոնդից:

4.Պարտավորեցնել Գուրգեն Ալեքսանի և Գոհար Գարեգինի Ջավուկցյաններին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝167541(հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ:

5. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. ապրիլի 02
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ապրիլի 2020 թվականի N 241-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն թվականի ապրիլի 10-ին հրավիրել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու նստվայրում՝ հետևյալ օրակարգով.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 ապրիլի 10-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին:

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 97-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4. 2020 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին:
5. «Միջհամայնքային համագործակցություն՝ աղբավայրի ցանկապատում» դրամաշնորհային ծրագիրը հաստատելու մասին:

6. «Ավագանու նիստերի առցանց հեռարձակում» դրամաշնորհային ծրագիրը հաստատելու մասին:

7. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը աճուրդով օտարելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

10. Ինքնակամ կառուցված, համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված գույքը օտարելու մասին:

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի բնակիչ Նաիրա Մելսիկի Ազոյանին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

12.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:

13. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու անդամ Սուսան Սուրենի Մարդոյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

14. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու անդամ Սամվել Նիկոլայի Ավետիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

15. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող տրանսպորտային միջոցները աճուրդով օտարելու մասին:

16. Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

17. «Տաշիր համայնքի Կ.Դեմիրճյան, Վ.Սարգսյան փողոցների և Լեռնահովիտ բնակավայրի (9-րդ, 6-րդ և 1-ին թաղամաս) ճանապարհների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

18. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով արդիականացման » սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

19.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման ծրագիր» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

20.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի վերանորոգում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. ապրիլի 03
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2020 թվականի N 242-Ա

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրմանի հավելված 1-ի 8.4 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-7),ճարտարապետության, քաղաքաշինության գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-4), ճարտարապետության, քաղաքաշինության գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-5) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝
1) Լևոն Տեր- Սիմոնյան –Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2) Դավիթ Ստեփանայն – Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3) Էդգար Արշակյան- Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4)Նորայր Բաղդասարյան –Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5) Արթուր Պողոսյան – ավագանու անդամ,
6) Նարինե Բաղդասարյան –ուսումնական հաստատության ներկայացուցիչ:
2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համակարգչային օպերատոր Սյուզաննա Սերյոժայի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. ապրիլի 07
ք.Տաշիր